# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԱՄ-ՄԱԱՊՁԲ-22/18

Ք.Աշտարակ

« 04 » մարտ 2022 թ.

**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**-ը ի դեմս գլխավոր քարտուղար Հ.Գևորգյան-ի, որը գործում է ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **<<Գա Գոռ>> ՍՊԸ**-ը, ի դեմս տնօրեն Կ.Սմբատյան-ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում [illegible]

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **350000 (երեք հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 :

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 8.15 կետում նշված համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պյրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից [illegible]

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարաձգվելմինչև պայմանագրով այդժամկետըլրանալը՝ Վաճառողի առաջարկությանառկայությանդեպքում, Գնորդիմոտչիվերացել ապրանքի օգտագործմանպահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ Արագածոտնի մարզպետարան
Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ,
Վ.Պետրոսյան 4
ՀՎՀՀ՝ 05004247
Հ/Հ 900441041176
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ Հ Գևորգյան

-----------------------------------
/ստորագրություն/ Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Գա Գոռ>> ՍՊԸ
Ք.Աշտարակ, Ն.Աշտարակեցու 31/4
Հեռ -055 43-23-23, 094 88-23-23
Ինեկոբանկ Աշտարակի մ/ճ
ՀՎՀՀ 05025794
Հ/Հ 2051322077341001
Էլ փոստ gagor033@gmail.com
տնօրեն Վ.Սմբատյան

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
« 04 » մարտ 2022 թ. կնքված
ՀՀԱՄ-ՄԱԱՊՁԲ-22/18 ծածկագրով պայմանագրի
ՀՀ դրամ

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ...վեր ...վ ...ապ ...ված ...ար ...նի ...արը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Մատակարարում: Հասցե | Ենթակա քանակներ | Ժամկետներ |
| | 18141100 | աշխատանքային ձեռնոցներ | Ձեռնոցներ ռետինից I տիպի ՝ N2, N3 (XLչափի), հաստությունը՝0.6-0.9մմ, I I տիպի՝ N9, N10(XLչափի),հաստությունը՝ 0.2-0.4մմ, երկարությունը300 ոչ պակաս, ըստ ԳՕՍՏ 20010-93 կամ համարժեք | զույգ | 300 | 6000 | 20 | Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4 | 20 | պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| | 19641000 | պոլիէթիլենային պարկ, աղբի համար | Աղբի պոլիէթիլենային տոպրակներ՝ 60լ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍՏ 10354-82 կամ համարժեք: | հատ | 30 | 36000 | 1200 | Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4 | 1200 | պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| | 31211200 | փոխանջատիչներ | Անջատիչ 1 ստեղն Extra, չափը՝ C1B1-001-CБ/սպիտակ, Պաշտպանության աստիճանը (IP)՝ 20Չափերը՝ 65*65 մմLարում՝ 250 ՎՀոսանքի ուժը՝ 16 Ա | հատ | 580 | 5800 | 10 | Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4 | 10 | պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| | 31331280 | էլեկտրական լար՝ պղնձյա, բազմաջիղ, ՊՊՎ, 2x2.5 մմ2 | Պղնձե ջղերով նախատեսված ներքին մոնտաժման համար տարբեր հատվածքով՝ 2,5 մմ2, մոնտաժային լար տարբեր քանակի մետաղալարե պղնձե կամ անագապատ պղնձե ջղերով, պոլիվինիլքլորիդային մեկուսացմամբ կամ անագապատ պղնձե ջղերով պոլիէթիլենային մեկուսացմամբ, տարբեր | մետր | 300 | 30000 | 100 | Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4 | 100 | պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | 31331290 | էլեկտրական լար՝ պղնձյա, բազմաջիղ, ՊՊՎ, 2x4.0 մմ2 | Պղնձե ջղերով նախատեսված ներքին մոնտաժման համար տարբեր հատվածքով՝ 2,5 մմ2, մոնտաժային լար տարբեր քանակի մեպաղալարե պղնձե կամ անագապատ պղնձե ջղերով, պոլիվինիլքլորիդային մեկուսացմամբ կամ անագապատ պղնձե ջղերով պոլիէթիլենային մեկուսացմամբ, տարբեր | հատ | 350 | 28000 | 80 | Հասցե: Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4<br>Ենթակա քանակներ: 80<br>Ժամկետներ: պայմանգրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| 6 | 39722100 | վառարաններ ի մասեր | վառարանների մասեր , տէներ. | հատ | 7000 | 49000 | 7 | Հասցե: Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4<br>Ենթակա քանակներ: 7<br>Ժամկետներ: պայմանգրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| | 31531300 | տնտեսող լամպեր | Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U-ձև G-13 տիպի լամպակոթով, 20, 25 և 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականության, համապատասխան երկարությամբ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների» տեխնիկական կանոնակարգի | հատ | 1500 | 45000 | 30 | Հասցե: Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4<br>Ենթակա քանակներ: 30<br>Ժամկետներ: պայմանգրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| | 31531820 | լամպի տոտիկներ | Լամպի տոտիկներ/պատրոն/ | հատ | 300 | 5700 | 19 | Հասցե: Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4<br>Ենթակա քանակներ: 19<br>Ժամկետներ: պայմանգրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| | 31651400 | մեկուսիչ ժապավեններ | Ինքնակպչուն պոլիմերային մեկուսիչ ժապավեններ | հատ | 300 | 3000 | 10 | Հասցե: Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4<br>Ենթակա քանակներ: 10<br>Ժամկետներ: պայմանգրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| | 31683400 | եռաբաշխիչ | Չափսը: 3տ 3 մ : 110 Ա, 250 Վ միացման մանրակներով , ԳՕՍՏ Ռ 51324.1-99 կամ համարժեք: Անվտանգությունն՝ ըստ ԳՕՍՏ 12.2.007.0-75 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" Մակել կամ համարժեքը: | հատ | 5000 | 25000 | 5 | Հասցե: Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4<br>Ենթակա քանակներ: 5<br>Ժամկետներ: պայմանգրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| | 31684400 | վարդակ | Պաշտպանության աստիճանը (IP)՝ 20Չափերը՝ 65*65մմ Լարում՝ 230 ՎՀոսանքի ուժը՝ 16 Ա դեպքում:Պաշտպանության աստիճանը (IP)՝ 20Չափերը՝ 65*65 մմԼարում՝ 230 ՎՀոսանքի ուժը՝ 16 Ա | հատ | 600 | 6000 | 10 | Հասցե: Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4<br>Ենթակա քանակներ: 10<br>Ժամկետներ: պայմանգրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | 39224331 | դույլ պլաստմասե | Պլաստմասսայե, 8-12 լ տարողության, ՀՏՍ 124-2007, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված ,Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի | կգ | 1000 | 8000 | 8 | Հասցե: Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4 | Ենթակա քանակներ: 8 | Ժամկետներ: պայմանգրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| 3 | 39224341 | աղբարկղ, պլաստմասե | Պլաստմասսայե, 5-10 լ տարողության, նախատեսված աղբի համար ՀՏՍ 124-2007, անվտանգությունը, մակնշումը եւ փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679- Ն որոշմամբ հաստատված ,Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային եւ դրանց հիմքով | կգ | 500 | 4000 | 8 | Հասցե: Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4 | Ենթակա քանակներ: 8 | Ժամկետներ: պայմանգրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| | 39831240 | մաքրող նյութեր | Մածուկանման զանգված, օգտագործված հոտավորիչի հոտով, գույնը՝ ըստ լվացող միջոցների գույնի որոշման սանդղակի, ջրածնային ցուցիչը(pH)՝ 9-10.5, մակերևութաակտիվ նյութի զանգվածային մասը՝ ոչ պակաս 18% , ջրում չլուծվող նյութերի զանգվածային մասը՝ ոչ ավելի 3 %, խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 50%, չափագրված պոլիմերային կամ ապակե տարաներում՝ 200գ-ից մինչև1000գ զանգվածներով:Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀկառավարության 002004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որաշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի» | լիտր | 750 | 7500 | 10 | Հասցե: Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4 | Ենթակա քանակներ: 10 | Ժամկետներ: պայմանգրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| | 39831245 | օճառ, հեղուկ | Ձեռքի՝ հեղուկ, ծաղկային եթերով, ջրածնային իոնների խտությունը՝7-10 pH 500 մլ. Պլաստմասե տարայով, Միսթեր Ջին տեսակի կամ համարժեքը | հատ | 600 | 9000 | 15 | Հասցե: Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4 | Ենթակա քանակներ: 15 | Ժամկետներ: պայմանգրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| | 39831247 | ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (խտանյութ) | Ախտահանող միջոց /ժավել սովորական/ | լիտր | 170 | 8500 | 50 | Հասցե: Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4 | Ենթակա քանակներ: 50 | Ժամկետներ: պայմանգրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| | 39831280 | ապակի մաքրելու միջոց | Ապակու լվացման փոշի կամ հեղուկ, 500մլ, Նաշ Սաշ տեսակի կամ համարժեքը | հատ | 600 | 6000 | 10 | Հասցե: Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4 | Ենթակա քանակներ: 10 | Ժամկետներ: պայմանգրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |

| | | | | | | | | Հասցե | Ենթակա քանակներ | Ժամկետներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 39831282 | կահույք մաքրելու լաթ | Կահույք մաքրելու լաթ, բամբակյա, 40*40 չափսի | հատ | 500 | 9500 | 19 | Ք.Աշտարակ, Վ. Պետրոսյան4 | 19 | պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| | 39836000 | ավել, սովորական | Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500) գրամ, երկարությունը (85- 90) սմ, ավլող մասի լայնքը (35-40) սմ | հատ | 1000 | 16000 | 16 | Ք.Աշտարակ, Վ. Պետրոսյան4 | 16 | պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| | 44521120 | դռան փականներ | Դռան ներդրովի փական բռնակով 7-17սմ | հատ | 6000 | 30000 | 5 | Ք.Աշտարակ, Վ. Պետրոսյան4 | 5 | պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |
| | 44521200 | կողպեքների մասեր | Դռան փականների միջուկներ | մետր | 2400 | 12000 | 5 | Ք.Աշտարակ, Վ. Պետրոսյան4 | 5 | պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 21 օր հետո մինչև 20.12.2022 |

նքի տեղափոխումը պետք է կատարի մատակարարը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ Արագածոտնի մարզպետարան | <<Գա Գոռ>> ՍՊԸ |
| ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան 4 | Ք.Աշտարակ, Ն.Աշտարակեցու 31/4 |
| ՀՎՀՀ՝ 05004247 | Հեռ -055 43-23-23, 094 88-23-23 |
| Հ/Հ 900441041176 | Ինեկոբանկ Աշտարակի մ/ճ |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | ՀՎՀՀ 05025794 |
| ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար Հ.Գևորգյան | Հ/Հ 2051322077341001 |
| | Էլ փոստ gagor033@gmail.com |
| | տնօրեն Գ.Մխիթարյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 2
« 04 » մարտ 2022 թ. կնքված
ՀՀԱՄ-ՄԱԱՊՁԲ-22/18/ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| գնումների պլանով ...ախատեսվ ած միջանցիկ ...ածկագիրը՝ ըստ ԳՄԱ ...սակարգմ ...ան (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 141100 | աշխատանքային ձեռնոցներ | - | - | 686 | 2100 | 2100 | 2100 | 3600 | 3600 | 3600 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 641000 | պոլիէթիլենային պարկ, աղբի համար | - | - | 4114 | 12600 | 12600 | 12600 | 21600 | 21600 | 21600 | 36000 | 36000 | 36000 | 36000 |
| 211200 | փոխանջատիչներ | - | - | 663 | 2030 | 2030 | 2030 | 3480 | 3480 | 3480 | 5800 | 5800 | 5800 | 5800 |
| 331280 | էլեկտրական լար՝ պղնձյա, բազմաջիղ, ՊՊՎ, 2x2.5 մմ2 | - | - | 3429 | 10500 | 10500 | 10500 | 18000 | 18000 | 18000 | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 31290 | էլեկտրական լար՝ պղնձյա, բազմաջիղ, ՊՊՎ, 2x4.0 մմ2 | - | - | 3200 | 9800 | 9800 | 9800 | 16800 | 16800 | 16800 | 28000 | 28000 | 28000 | 28000 |
| 22100 | վառարանների մասեր | - | - | 5600 | 17150 | 17150 | 17150 | 29400 | 29400 | 29400 | 49000 | 49000 | 49000 | 49000 |
| 31300 | տնտեսող լամպեր | - | - | 5143 | 15750 | 15750 | 15750 | 27000 | 27000 | 27000 | 45000 | 45000 | 45000 | 45000 |
| 31820 | լամպի տոտիկներ | - | - | 651 | 1995 | 1995 | 1995 | 3420 | 3420 | 3420 | 5700 | 5700 | 5700 | 5700 |
| 51400 | մեկուսիչ ժապավեններ | - | - | 343 | 1050 | 1050 | 1050 | 1800 | 1800 | 1800 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 33400 | եռաբաշխիչ | - | - | 2857 | 8750 | 8750 | 8750 | 15000 | 15000 | 15000 | 25000 | 25000 | 25000 | 25000 |
| 34400 | վարդակ | - | - | 686 | 2100 | 2100 | 2100 | 3600 | 3600 | 3600 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 4331 | դույլ պլաստմասե | - | - | 914 | 2800 | 2800 | 2800 | 4800 | 4800 | 4800 | 8000 | 8000 | 8000 | 8000 |
| 4341 | աղբարկղ, պլաստմասե | - | - | 457 | 1400 | 1400 | 1400 | 2400 | 2400 | 2400 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 1240 | մաքրող նյութեր | - | - | 857 | 2625 | 2625 | 2625 | 4500 | 4500 | 4500 | 7500 | 7500 | 7500 | 7500 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 39831245 | օճառ, հեղուկ | - | - | 1029 | 3150 | 3150 | 3150 | 5400 | 5400 | 5400 | **9000** | **9000** | **9000** | **9000** |
| 9831247 | ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (խտանյութ) | - | - | 971 | 2975 | 2975 | 2975 | 5100 | 5100 | 5100 | **8500** | **8500** | **8500** | **8500** |
| 9831280 | ապակի մաքրելու միջոց | - | - | 686 | 2100 | 2100 | 2100 | 3600 | 3600 | 3600 | **6000** | **6000** | **6000** | **6000** |
| 9831282 | կահույք մաքրելու լաք | - | - | 1086 | 3325 | 3325 | 3325 | 5700 | 5700 | 5700 | **9500** | **9500** | **9500** | **9500** |
| 9836000 | ավել, սովորական | - | - | 1829 | 5600 | 5600 | 5600 | 9600 | 9600 | 9600 | **16000** | **16000** | **16000** | **16000** |
| 521120 | դռան փականներ | - | - | 3429 | 10500 | 10500 | 10500 | 18000 | 18000 | 18000 | **30000** | **30000** | **30000** | **30000** |
| 521200 | կողպեքների մասեր | - | - | 1371 | 4200 | 4200 | 4200 | 7200 | 7200 | 7200 | **12000** | **12000** | **12000** | **12000** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | 40000 | 122500 | 122500 | 122500 | 210000 | 210000 | 210000 | **350000** | **350000** | **350000** | **350000** |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ Արագածոտնի մարզպետարան
ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան 4
ՀՎՀՀ՝ 05004247
Հ/Հ 900441041176
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Հ.Գևորգյան

/ստորագրություն/ Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Գա Գոռ>> ՍՊԸ
Ք.Աշտարակ, Ն.Աշտարակեցու 31/4
Հեռ -055 43-23-23, 094 88-23-23
Ինեկոբանկ Աշտարակի մ/ճ
ՀՎՀՀ 05025794
Հ/Հ 2051322077341001
Էլ փոստ gagor033@gmail.com
տնօրեն՝ Կ.Սմբատյան

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*«    » մարտ 2022 թ. կնքված*
*ՀՀԱՄ-ՄԱԱՊՁԲ-22/18 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
_______________________
_______________________
գտնվելու վայրը ___________
հհ ___________________
հվհհ __________________

Պատվիրատու
_______________________
_______________________
գտնվելու վայրը ___________
հհ___________________
հվհհ__________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «         »2022 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «         » 20   թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարվածապրանքների, կատարվածաշխատանքների, մատուցվածծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
_______________________
ստորագրություն
_______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքն ընդունեց
_______________________
ստորագրություն
_______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

« » մարտ 2022 թ. կնքված
ՀՀԱՄ-ՄԱԱՊՁԲ-22/18ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ___________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _______________________ -ին կնքված N_______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն
______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն